

## ԱԵՐ ՔԸՐԻ ԱԴՐԵՆԱԼՈՒ

(Հայկական աւանդութիւն)

11

Մեր հալը ենի երկրում իւրաքանչիւր աւերակ գիւղ  
կամ քաղաք, վանք թէ եկեղեցու վլատակ, շինութեան  
մի աննշան բեկոր անգամ, իւր անցեալի հարուստ  
պատմութիւնն ունի: Եւ եթէ նրանք լեզու առած՝  
պատմէին իրենց գոյութեան ուրախ երգերն ու տխուր  
լիշտակները՝ գրի առնելու համար՝ առասպելօրէն ա-  
սենք, պէտք էր ծովի ջրերը մելան դառնալին և տի-  
եղերքի մակերևոյթը՝ ամբողջովին քարտէզ... Եւ արդ  
անշքացած՝ կիսաւեր տաճարները ձիգ դարերով քըս-  
տօնեալ ժողովրդի ջերմեռանդ հաւատի ու անխորտա-  
կելի լուսերի ամուր լենարան են եղել. սրբել են՝ լացո-  
ղի արտասուրքը, ամոքել՝ վշտագնեալի տառապանքը և  
լուզուած ու լքուած սրտերի համար՝ որպէս անուշ-  
հոս բալաստն՝ սպեղանի դարձել. սակայն մենք կանգ-  
առնենք ալն կիսակործան մենաստանի մօտ, ուր մո-  
մեղէն արձանի նման՝ ծնկաչոք ու բազկատարած աղօ-  
թում է միջակ տարիքով մի նիշար, դալկացած և տրի-  
րադէմ մարդ. վիշտը՝ անհնարին դառնութեամբ կար-  
ծես մարմնացել է նորա պղտորած աչքերի ու մաշտած-  
դէմքի վերայ. վերացած մտքով նա լաց է լինում և  
արտասուրքի խոշոր կաթիլները թրչում են ալն սև  
խաչքարը՝ որ ծածկւում է նորա ջերմագին համբոլընե-  
րով.

— Ո՞վ, դու, Ամենագէտ և Ամենակարող, բաւական համարիք իմ կրած զբկանքներն ու տառապանքը... Դէթ փրկիք իմ տարաբաղդ ընտանիքը վերահաս սովից ու մահից... եթէ ցանկանաս՝ կարող ես: — Այս պէս էր խօսում նորա ցամաքած լեզուն, հազիւ լսելի, խեղդուկ ու սրտաճմիկ ձայնով:

Եւ նա աղօթում էր անդադրում. և նա կրկնում էր ալդ խօրհրդաւոր աղերսը, բուռն հաւատով ու լի լոյսով՝ սկսուած առաւտեան պայծառ արևածագից՝ մինչև կարմրուն վերջալոյսը:

## Բ

Վաղուց չէր, որ Անդրկովկասի գաւառական քաղաքներից մէկում, ինչպէս ասում է ժողովուրդը՝ ծընուայ էր մի շէն ու փառաւոր օջախ, փարթամ երկրի ամենատեսակ հարստութեամբ, որ սերնդաբար իրեն է հասել անորոշ ժամանակներից. ոսկին՝ պարկերով էր պահւում, կրկնակի միջնորմում, քարեղէն աւազանի մէջ. սպասաւորում էին քառասուն ծառաներ, քառասուն՝ ընկած և աշխատող ձեռքերից իսպառ զրկուած՝ ընտանիքներ կերակուում. էլ վանք ու Աստուածահանոյ հիմնարկութիւն չկար, որ վրիպած լինէր լիշուած ընտանիքի բարի ուշագրութիւնից կամ բարեպաշտական օժանդակութիւնից. պանդուխտը՝ ալդ հասարակաց պանդոկումն էր իւր հանգիստը գտնում, քաղցածը՝ լագենում, կարօտաւորը՝ լիանում...

Բայց, աշխարհի օրէնքը թելադրում է, որ պայծառ ցերեկուան լաջորդէ մթին գիշեր. լուլիսի այրող ջերմութեանը՝ լունուարի սառնամանիք, բուռն ցնծութեանը՝ սուգի ու թախծութիւնից հեծկլտանք... Այդ ընտանիքի նահապետը՝ իւր զոյդ չափահաս զաւակների հետ միասին՝ չար նախանձի զոհ դարձաւ. դրացունուն իսկ հարազատի ու բարեկամի չկամութեան դատապարտելի ոգին՝ կարճ ժամանակամիջոցում, լափշտակութեան ու աւարի մատնեց ալն բոլոր կարողութիւնը՝ որ իբրև բարեգործութեան փշոտ պսակ՝ բոլորուել էր ալդ ընտանիքի շուրջը, որի վերջին շառաւել՝ երիտա-

սարդ Վարդգէսը միայն մնաց իւր նորատի՝ սիրող կնոջ հետ միասին։ Նա իւր հալրենի օջախի բաղդաւորութեան ժամանակ էր ծնուել ու սնուել։ լաղթանդամ էր նա, խարտեաշ մազերով, ու խոշոր բիբերով, երկնանման լճակների մէջ թաղուած։ թաւ լոնքերը, նորածիլ, ոլորուն ընչացքը՝ աւելի փալլ էին տալիս նորատոնական գեղեցկութեանը։ լաճախ շըջում էր նա քաղաքից ոչ այնքան հեռու թաւուտ անտառները։ ուր մարդկալին ձեռներից գերծ՝ բնութիւնը իւր սքանչելի տիլապետութեան աթոռն էր հաստատել։ Վարդգէսի նժողութ ձիու սմբակների ոլորուն բևեռները ծալում էին ոսկեալ դրամների շարքերով։ ոսկեղէն վզնոցն ու թամբի ականակուռ մասերը իրենց զմալելի գեղեցկութիւնովն ու փալլով՝ մարդի աչք էին շացնում և իրոք, դժուար էր նայել ալիք ասպետին անտարբեր կերպով, ուր կերպոնանում էր աշխարհալին երջանկութիւնը իւր նախանձելի վալելքով։ Տեսէք, արաբական սև ձին շարժում է իւր աննման բաշը և ինամքով օրորում է թանկագին վզնոցը ախորժ զնդզնգոցով...

Աշխարհի սքանչելքը ընդօրինակող վրձինները՝ կտաւի վըալ, ժամանակակից շնորհալի օրիորդներն ու նորահարսները՝ գորգերի վերալ, մի խօսքով՝ իւրաքան. չիւր գեղարուեստին ծառալող անձն իւր տաղանդի, իւր մատների աշխատութեան՝ իբրև գողտըիկ օրինակ կամ մօդէլ՝ ժառալեցնում էր Վարդգէսի առնական, զմալելի դէմքը, ասպետական տարազով։ երբեմն նաև սև ձին տակին, շըջապատուած ընտիր բարակներով՝ որսի գնալիս։

Բալց... ինչ զարմանք, որ ալսպէս է անցնում փառքը աշխարհի։

## Գ

Վարդգէսի բաղդաւոր ամուսնութիւնից 10 տարի էր անցել. — բաղդաւոր ասացինք, որովհետև Արտաշէսի և Սաթենիկի հարսանեաց նման, ալն օրերին տեղում էր ոսկի և մարգարիտ, որի նմանը անձանօթ էր հասարակ մահկանացուներին, որ՝ ամենալն իրա-

ւամբ՝ կարող էր ժամանակակից վիպասանների համար հարուստ նիւթ մատակարարել...— նոյն քաղաքի հեռաւոր խորշում, մի ողորմելի կիսաքանդ իրճթում նուազած աչքերով, դժգոյն և մաշուած դէմքով կըծկուած էր մի մանկահասակ կին, հէնց տուաջին հայեացքից, առանց հոգեբան լինելու հեշտ էր կարդալ թունձր ամպի նման նորա ճակատին նստած՝ սև օրերի տիսուր պատմութիւնը, բեկբեկուած հոգու դժգոյն պատկերը, մի կողմում՝ օրօրոցն էր դրուած ութն ամսական մանկիկով, որ մեքենաբար շարժում էր նա, աչքերը դէսպի մանկիկը սևեռած և մտքով իսպառ վերացած. ահա նա տեսնում է անցեալի մտապատկերը, բաղդի՝ խափուսիկ ու վաղանցուկ խաղը... և նորա ցամաքած կըծքից դուրս են թռչում աղէխարշ երգի սըրտաճմլիկ մըմունջ... և որքան ներդաշնակ է արդ մեղեդին քաղցած երեխի ճիշին ու անպաճոյն օրօրոցի ճռճռոցին. միւսում՝ տարածուած է աղքատիկ ցնցոտիների մէջ՝ 7–8 տարեկան մի ուրիշ մանուկ, նորա բաղդի տապագալ լոյս՝ անդրանիկ զաւակը, որ լուելեալնդիսում էր ծնող մօր անվերջանալի արտասուքներն և, կարծես, բնազդամբ թափանցելով մօր հոգեկան աշխարհը՝ ցանկանում է կարեկից լինել, թեթևացնելու նորա վիշտը:

— Մի լաց լինիր, մալրիկ... հալրիկս շուտով տունկգալ, տես լսում է եկեղեցու զանգերի ձալնը, և նամեզ հաց կըերի, կերակուր էլ, միրգ էլ...— թոթովեց նորա լեզուն, վատահ կերպով և լի հաւատով։  
«Հալրիկը շուտով կգալ» այս անախորժ նախադասութիւնը թափ անցաւ երիտասարդ մօր վշտերով լճացած սրտի խորքերը և քնուծ մարդի նման՝ սթափուեցնա ու բարձրացրեց կըծքին խոնարհած գլուխը։

— Ալո՛, շուտով կգալ նա, բայց տեսնենք քարասիր պարոնը այս շաբթի կտալ նորան իւր դառնաշարքար քրտնքի վարձը...— կըկնեց անգիտակցօրէն։ Մանկիկը ուրախութեան ցոյց արեց և վաթաթուեց վշտուծնողի պարանոցով. վերջինս լի խանդադատանօք հպեցիւր ցամաքած շըմունքները նորա ալտերին. թախծութեան զոլդ կաթիլներ մեղմօրէն վալր իջան նորա ոս-

կորացած երեսից և թրչեցին զաւակի դալուկ դէմքը...  
Եւ վշտի ալդ աղէխարը պատկերը որպէս փղոս-  
կրեալ քանդակօւն արձան՝ եթէ ոչ եգիպտական մու-  
միս՝ երկար միջոց մնաց լուռ ու անշարժ, մինչև որ  
հրագնդի աչք ծակող սլաքները իսպառ աներևութա-  
ցան հեռաւոր հորիզոնում. և անվստահ քալերով ներս-  
մտաւ դալկադէմ մի երիտասարդ, կորացած իրանով,  
վիտ ու հոգեսկէս տանջուած...

Նազլու, իմ քաղցրիկ նազլու... - լսուեցաւ նո-  
րա բերանից մի տեսակ անձկութեամբ: Նազլուն՝ որի-  
տչքերում տակտին չէր չորացել աղի արտասուքի աղ-  
բւրը՝ դէմքի պարզութեամբ, նորահարսի նման ու-  
րախ ուրախ վեր բարձրացաւ տեղից. գրկեց ամուսնուն-  
և սրտադին համբուրեց նորան.

— Իմ պարոնը այս շաբաթին էլ չտուեց օրավար-  
ձրս. սպասիր, ասուց, մի քանի ժամանակ էլ... — Ան-  
համարձակ կերպով ասաց տղամարդը, որ՝ ինչպէս տե-  
սանք, իւր գործն էր շինել ջերմ արսասուքներով ցո-  
ղել հինտւուրց վանքի բեկորները:

— Կսպասենք, թող օրհնուած լինի Աստուծոյ կամ-  
քը. — Վրայ բերեց նազլուն:

Եւ այդօրինակ վիճակի դառնութեան ներքեւ.  
Քրիստոնէական հաւատով գուռելողաւած՝ սև քարի ա-  
զօթաւորը՝ մխիթարուեց ու հանգստացաւ:

### Պ.

Երեկոյ էր. քանի գնում կապոյտ երկնակամարը  
պալծառանում էր շողակնի նման փալլիող աստղերով.  
կար ժամանակ, տարիներ առաջ, որ նման գիշերներին,  
աւերակ եկեղեցու կամ, ինչպէս անուանում է նորան  
տեղական ժողովուրդը՝ սև քարի աղօթաւոր մարդը  
տան էր վերադառնում հանգիստ սրտով, ուրախ ու  
զուարժ. իսկ ալժմ, ալժմ գլխիկոր և սրտաթեկ. նորա  
քալլերը՝ անհամարձակ էին՝ կորցրած թանկագին ակ-  
նեղէնը պտրող մարդի դանդաղկոտութեամբ. նորանում  
բորբոքում էր այն տանջող միտքը՝ թէ լցուած չէ  
արդեօք իւր համար սահմանուած դառնութեան բա-  
ւուսա

ժակը... Սև խաչը սկիտի գթալ վերջապէս գէթ իւր հրեշտակի չափ անմեղ կնոջն ու նորածիլ զաւակներին և հասուցանէ փրկութեան ցանկալի նաւահանգիստը... Նորա տեսութեան հանդէս, կարծես, երևում էր այն խորհրդաւոր խարոյկը, որ պկէտք է առաջնորդէր գիշերային մժութեան մէջ՝ ճանապարհից շեղուած ու մաղրուած անցորդին:

Ահա նա կանգ առաւ իւր խրճիթի առջև. մի վալը-կեան՝ պղտոր մտքեր պաշարեցին նորա ուղեղը. Բնչ էր տեսնում նա՝ բաղդաւոր ժամանակների նման՝ պատուհաններից արտացոլում է կրակի լուսը, ծխում է և խոհանոցի ծխնելուզը. մի երեսութ, որ վաղուց օտար էր և անձանօթ իւր խղճուկ բնակարանին:

—Փառք քեզ, Աստուած, փա՛ռք Քեզ...—բացա-կանչեց նա և անուրջների մէջ զառանցող հիւանդի նման՝ սկսեց կրկնել իւր այն աղերսանքը, որ բազկատարած կրկնում էր անդադրում խնկի ու մամի ծխի ներքեւ իւր բնտկան գոյնն ու սիրուն քանդակների նուրբ գծերը թաղած՝ սեիկ-խաչի առջև, որը սակայն, այդ խկ պահուն, արձանացել էր իւր տեսութեան հանդէպ, ողորմած ու կարեկից դիմագծով... կծկուեց նա փոքրիկ պատուհանի մօտ, ինչպէս որ մեղապարտը՝ իւր դատավճիռը լսելիս. նորա գլխում զանազան խոհերի մի տեսակ լճակ էր գորացել և կարծես քիչ էր մնում, որ խեղդէր նորան. սակայն խորապէս հաւատում էր Տիրոջ վերահաս օգնութեանը. նա գիտէր, որ իւր արտասուբները ապուրդիւն չպիտի անցնէին և փափուկ ու արգաւանդ հողի մէջ ընկնող հատիկի նման՝ պիտի «բաղում արդէւնք» տալին:

—Ո՞վ է.— Ճախնեց կինը, բաց անելով գոնակն և նկատելով մի ինչ որ խըսուականց Կ'աշէց

—Ես եմ Նազլու, սիրուն Նազլուս:

—Դէհ, շտապիր, վաղուց է, որ ջուր եմ տաքաց-լիք քեզ լողացնելու համար. օշարակ, դինի և կերակուր պատրաստել... չէ որ քո պարոնը բերեց. աշխատութեանդ հազարապատիկ վարձը-մի կասլոց ակտունանի, որ երկար ժամանակ՝ մինչև գերեզման պիտի բաւականանալ մեզ վալելչապէս ապրելու համար:

—Ո՞վ էր նա, միթէ բնքը իմ պատրոնը...—մի  
տեսակ ալլալմունքով հարցրեց սև քարի աղօթաւորը:  
—Զգիտեմ, մի դալկադէմ ծերունի, վառ աչքերով  
ու ձեան նման սպիտակ մորուքով, որը սակայն, ինձ  
թւում է թէ կամենում է անծանօթ մնալ... զիտես  
որքան ոսկի ու ակնեղէն շնորհեց, մի ամբողջ կապոց...  
—շատախոսեց կինը, որի շարմաղ դէմքը նման էր այդ  
պահուն 15 օրուայ բոլորուած լուսնին. նոյնքան պալ-  
ծառ ու լուսաւոր, սակայն նորա նման զուրկ ջերմու-  
թիւնից ու կեանքի կրակից...

\* \* \*

Աղօթաւորի անձնաւորութիւնը անշուշտ անծա-  
նօթ չէ ձեզ համար, նա բաղդաւոր օջախի վերջին  
շառաւիդ՝ Վարդէսն էր, որ հրաշքով ստացած գումա-  
րով վերականգնեց խանգարուած տաճարը, ուր՝ այնու-  
հետև՝ իւր գոհացողական աղօթքների հետ միախառ-  
նում էր նաև խնկի ու կնդիկի անուշահոտութիւնը  
և աստուածալաշտութեան հոգեսքանչ ալէլուն:

ԿՐՊԵ

